

Տանը թագուցուն պատկ





ԱՅՐԱՐԱՏ

Գատմական Այրարատ նահանգից այս հատորում զետեղված են բացառապես Հերիաթները, որոնք տարրեր ժամանակներում հավայնել են Տիդրան Նավասարդյանցն ու Երվանդ Լալայանցը Մի քանի խոսք Տ. Նավասարդյանցի և եր Լալայանի հավաքած նյութերի մասին, որոնք օգտագործված են ներկա հրատակության մեջ:

1. Հատորի հիմնական մասը Տ. Նավասարդյանցի հավաքած հերիաթներն են, որոնցից գերակշռող բաժինը տպագիր նյութեր են. ա) Տպագիր նյութերը վերցված են Տ. Նավասարդյանցի հրատարակած «Հայ ժողովրդական հերիաթների» I—X գրքերից. Այդ գրքերում հավաքված են տարրեր վայրերի բանահյուսական բաղմաթիվ ժանրերի ստեղծագործություններ: Ներկա հրատարակության մեջ օգտագործված են միայն Վաղարշապատի հերիաթները: Տալիս ենք Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հերիաթների» գրքերի հրատարակության տեղերն ու թվականները: I գիրք՝ «Վաղարշապատ», 1882, II գիրք՝ «Երևան», 1882, III գիրք՝ «Թիֆլիս», 1884, IV գիրք՝ «Տփիսիս», 1888, V գիրք՝ «Տփիսիս», 1889, VI գիրք՝ «Թիֆլիս», 1890, VII գիրք՝ «Թիֆլիս», 1891, VIII գիրք՝ «Թիֆլիս», 1894, IX գիրք՝ «Թիֆլիս», 1902, X գիրք՝ «Թիֆլիս», 1903:

«Հայ ժողովրդական հերիաթների» I գրքի նյութերը Տ. Նավասարդյանցը նախապես տպագրել է «Արարատ» ամսագրի 1881 թ. № 1, 1882 թ. № 1, 2, 3 և 4 թերթուններում: Նույն 1881 թ. № 11-ում զետեղված է մի անհտորագիր խմբագրական հոդված, որտեղ նշված է բանահյուսական նյութերի հավաքման անհրաժեշտությունն ու կարևորությունը և բարձր գնահատված Տ. Նավասարդյանցի անձնվեր, հայրենասիրական գործը:

Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հերիաթների» տասը գրքերում տպադրված հերիաթների գրառման ձեռագրերը մեծ մասամբ չեն պահպանված:

Հայկական ՍՍԾ Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվում պահվող Տ. Նավասարդյանցի ֆոնդում (տես գործ

7, № 2) կա մի կազմած սովարածավալ տեսր, որի անվանաթերթի վրա Տ. Նավարդադյանցի ձեռագրով գրված է՝ «Հայ ժողովրդական հերիաթներ», Տ. Նավարդադյանցի, մազովածու, 1876—1880 թ. Տփխիս Խնչպես երևում է, Տ. Նավարդադյանցը այս ընդհանուր տեսրում ի մի է ժողովել իր հավաքած հերիաթները և պատրաստել տպագրության։ Ընդհանուր տեսրից կտրված հն մի շաբթ հերիաթներ, որոնք տպագրված են նրա գրքերում։ Թերթի մյուս էշութ լինելու պատճառով մնացել է կտրված մի քանի հերիաթների սկիզբը, որտեղ կա Տ. Նավարդադյանցի նշումը։ Շլքտագրված է ապելուաւ Բայց գրքերում տպագրված շատ հերիաթների դրաման ձեռագրերը պահառում են այդ ընդհանուր տեսրում։

Յավոք սրտի, Տ. Նավասարդյանցը իր հավաքած ու հրատարակած նյութերի ժաման շատ կցկտուր տեղեկություններ է տալիս էջատակի շատ անցողակի ժանոթությունից և հարանցիորեն արված ակնարկներից պարզվում է, որ այդ նյութերը ինքն է գրի առել Վաղարշապատ գյուղում։ Խնկ թե ո՞վքեր են ասացողները, կանկրեա ե՞րբ են գրի առնված այդ նյութերը, ի՞նչպիսի հանգամանեցներում և այլն, այդ մասին զրեթե ոչ մի տեղեկություն չի տրվում։ Մի բան միայն պարզ է, որ Տ. Նավասարդյանցը իր բանահավաքալիքան աշխատանքներն սկսել է գենես 1876 թվականից (ինչպես նշված է նրա ձեռագրի հավաքածուի անվանաթերթի վրա) և շարունակել է մինչև 90-ական թվականները։

Հայտնի է, որ հրատարակած նյութերի մեծ մասը ինքը՝ Տ. Նավասարդյանցն է գրի առել, իսկ երբ ձեռքի տակ ունեցել է ուրիշների ուղարկած նյութերը, այդ մասին նա հիշատակել է։

Տ. Նավասարդյանցի հրատարակած գրքերը պահաջարաններ ու ժանոթագրություններ չունեն, բացառությամբ առաջին զրից, որին կցված է մի հակիրճ առաջարան՝ ձեռնարկված աշխատանքի նպատակների և նշանակության մասին։

Իր անդրանիկի գրքույկի ճակատին Տ. Նավասարդյանցը թողել է հետևյալ ընծայականը. «Ցուր նախկին ուսուցչին, մեծ Ս. Պալատանյանին խորին հարգանոք նվիրում է ժողովողը»։

Ստորև ամբողջությամբ բերում ենք Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հերիաթների 1 գրքի առաջարանը»։

«ՀԱՅԱԶԱՐԴԱԿԱՆ

Մի ազգի հնագույն ժամանակներից մնացած մի ավերակ, մի արձանագրություն, մի դրամ և այլ սոցա նման հնության հետեր կրող առարկաներ՝ կենդանի վկայք են նույն աղքի փառավոր կամ անշուր անցյալի, որո՞նց վերա հնագիտները հիմնեն իրանց գիտնական հետազոտությունները՝ այդ ազգի անցյալ կյանքի հետ հանդիպանակու համար։ Սակայն, բացի դորանից, ո՞չ պահան հնագիտական նյութ են և մի ազգի ժողովրդական, այսպես ասած՝ խոսուն հնությունները, որոնք իրեն նորա մտքի և երիակայության ժնունդ՝ նորա անցյալ կյանքի, մտավոր զարգացման կենդանի պատկերներն են արտացոլում իրանց մեջ։

Այդ հնությունները՝ ժողովրդական բանափոր վեպերն են. ներկարները աղային հին նրգերը, առածնները, հանելուկները, ջուտասելուկները, անեծները, օրե-

Էռոյանները և այլն, որոնք իրեւ սրբազնն ժառանգություն՝ դարերից հետեւ, բերանե թերառն՝ հասկել են մինչև մեր օրերը: Խոսք չկա, այդքան երկար ժամանակամիջոցում, այդ ավանդությունները ժողովրդյան թերանում ենթարկվել են զանազան փոփոխությանց:

Ներկա ժամանակում, համարյա ամեն մի փոքր ի շատն քաղաքակրթված աղքի մեջ, այդ թանկացին հնությունները արդին մեծ ժամանմ ժողովրդած են և տպագրությամբ ի լույս ընթայած: Բայց մեր՝ հայերին մեջ, ցավոց սրտի պետք է տանը, նորա դեռևս մեր ռամիկ դասի սեպհականություն են և որոնք հետզհետեղուն են զանոնում ժամանակի անդութ ժանիքներին (նոցանից միայն մի քանի հատ ու կտոր նյութեր են ժողովրդած և զանազան զրբերի մեջ հրատարակված): Այս ի՞նչ, այդ հնությունները կարող են մեծ լույս ձգել մեր գրականության վրա և ամեն մի հայ անհատի գրասնդանի թանկացին զարդ կազմել, իբրև նվիրական ավանդ՝ իրանից շատ հարյուրավոր տարի առաջ ապրող հայ ժողովրդայն:

Ահա՝ այդ աշքի առաջ ունենալով՝ այս մի քանի տարի շարունակ, իմ թույլ ուժերը նվիրել եմ (և այսուհետև էլ նվիրվելու եմ) այդ նպատակին ժառայիլու:

Հայ ժողովրդյան մեջ ըիր ու ցան եղած այդ վեպերը և ավանդությունները ժողովելով և տպագրությամբ ի լույս ընթայելով՝ իմ միակ նպատակը ոչ այ ինչ է, եթե ոչ՝ նույն նյութ առաջարկել հնագետներին և բանասերներին՝ թողնելով՝ նոցա ֆնության և հետագոտության:

Այդ վեպերի ամեն տեսակներից արդին մեծ քանակությամբ ունիմ, որոնք թե անձամբ եմ ժողովվել՝ ճանապարհորդելով շատ նահանգներ և թե զանազան տեղերից ուրիշ անձինքներից ստացել: Առաջմամ, ձեռնարկել եմ ներկարների հրատարակության: Հուսալով, որ հերիաթները մեր ժողովրդյան մեջ (գոնք այն նահանգում, որի բարբառով զրված են նորա) նաև իրեւ ընթերցանության հետաքրքիր նյութ և կարող են ծառայել:

Վերջացնելով տողերս, պատիվ ունիմ հրատարակավ հայտնել իմ անկեղծ շնորհակալությունը հետևյալ հարգելի պարբեններին, որոնք բարեհաճնեցին նյութականապես օգնել, անցյալ տարի ձմրան ժամանակ ճանապարհորդելու սույն նպատակով՝ Գանձակու, Նոր Բայաղետի և մի քանի ուրիշ նահանգներ: Տվիխում մեծ գոկտոր Գ. Արքունի, մեծ քժիշկ Բ. Նավասարդյանց, ինձններնի նաշանիկ Պ. Ա. Շսայանց և Կլասիկական դիմնապիտու մի խոսք. Թագլում մեծ պ. պ. Մինեյ Միքոպյանց, Սամուել Թաղիրյանց, Առաքել Սատուրյանց և փաստաբան Պատկանյանց: Հայտնում եմ իմ խորին շնորհակալությունն և հետևյալ պարուններին՝ Մեծ. պ. պ. Ա. Պալասանյանցին, Գ. Տեր-Աղեքսանդրյանցին և Պ. Պռոշյանցին, որոնք ներկա գրքուրիկին վերաբերությամբ՝ լզլացան ինձ յուրյանց խնդացի խորհուրդներով: Տ. Ն.:

Խշակն իր հրատարակած «Հայ ժողովրդական հերիաթների» գրքերում՝ այնպես և պարբերական ժամուկում («Շահը, 1882 թ. № 4, № 222, 1883 թ. № 79, 1890 թ. № 109, 1894 թ. № 10 և այլն) Տ. Նավասարդյանցը հայտարարություններով ու ազդերով տեղյակ է պահել ընթերցող հասարակության և մտավորականությանը իր գործի ընթացքին, կոչ անելով նրանց մասնակցելու տեղերում ժողովրդական նյութերի հավաքման գործին:

Պարբերական մամուլում ու այլ օրգաններում տպադրվել են հոգվածներ ու դրախոսականներ, որոնց հեղինակները շատ բարձր են զնահատել Տ. Նավասարդդանցի նախաձեռնությունը և խրախուսները են նրա սկսած գործը (Պաֆիի, «Խամսայի մելիքություններ», 1882 թ. Հ. Մ. Հովհաննիսյան, ներքին տեսություն, «Մշակ» 1882 թ. № 228, Մ. Բարիտուրյանց, Ամառենախոսություն. Պ. Տ. Նավասարդյանի Հայ ժողովրդական հերիաթների ժողովածուի առիթով, «Արձագանք» 1784 թ. № 21, Վարսավ (Մ. Արենյան), Մատենախոսություն, «Նոր-Դարձ», 1891, № 137, Մատենախոսություն (անստորագիր), «Տարազ», 1894, № 10 և այլն):

Ինչպես ասված է այս հատորի նախարանում, պահպանվել է Տ. Նավասարդդանցի «Հայ ժողովրդական հերիաթների գործիրի սեփական օրինակները, որոնց տեքստերի վրա բանահավաք-հրատարակիլը մասնակի փոփոխություններ ու ճշշտումներ է կատարել: Ներկա հրատարակության համար Հիմք ընդունելով այդ ճշգրված տեքստը, սակայն բոլոր ուղղումները չեն, որ փոփանցել ենք ներկա տեքստում, այլ յուրաքանչյուր գեպքում հաշվի ենք առել ժողովրդական պատումներին հարազատ մնալու ձգտումը:

բ) Անտիպ նյութեր, Հայկական ՍՍՌ դԱ Դրականության ինստիտուտի բանահյուսական արխիվի Տ. Նավասարդյանցի փոնդից այս հատորում օդագործված է և Հայ ժողովրդական հերիաթների հերթական Խ պրակի համար պատրաստված կիսամաքրագիր, անմշակ նյութերը (տե՛ս գործ 2, № 20—21): Դրանք իրար կցված մի քանի տետրեր են, որոնք պարունակում են 12 հերիաթդրանց մեծ մասը ինքը՝ Տ. Նավասարդյանցն է գրի առել «աղարշապատում, իսկ մի քանիսը, ինչպես երեսում է ձեռագրերից, զրի են առել ուրիշները: Հիշված 12 հերիաթներից բացի, հիշյալ տետրի ցանկներում կան երկու հերիաթների անուններ («Զուախ կնիկը և «Մրապիոն»), որոնք, սակայն, այդ տետրում բացակայում են: Ինչպես իր գրառումների, այնպես էլ հատկապես ուրիշների զրի առած նյութերի տեքստերի վրա Տ. Նավասարդյանցը կատարել է բազմապիսի ուղղումներ: Ուրիշների զրի առած նյութերը Տ. Նավասարդյանցը հիմնավոր վերամշակման է ենթարկել, վերացնելով բանահավաքների վրիպումները, այսուհետային գժի աղավազումները, բարբառից շեղումները և այլն: Ընդհանուր առամմար այս անտիպ նյութերը սևագիր վիճակում են, չնչումներով ու լրացումներով լցված, որը զրեթե անընթեռնելի է դարձնում տեքստը: Աշխատել ենք ուղղել բոլոր տիպի վրիպումները: Հարկ եղած դեպքում, եթե իմաստային կամ գեղարվեստական արժեք են ներկայացնում, էջատակին տվել ենք այն բառերն ու արտահայտությունները, որոնք ուղղված կամ փոփոխված են բանահավաքի կողմից: Ձեռագիր, անտիպ նյութերի մեջ էլ Տ. Նավասարդյանցը որևէ տեղեկություն չի հաղորդում ասացողն իրի և գրառման հանգամանքի մասին:

2. Ներկա հատորում տպագրված հերիաթների մյուս մասը Եր. Լալայանի նյութերն են, որ նա հավաքել է 1913 թ. Վաղարշապատում և հրատարակել «Մարգարիտներ Հայ բանահյուսության» ժողովածուի II գրքում (1914-թ.) Օշականի և Փարպի գյուղների հերիաթների հետ: Եր. Լալայանը նույնանու շատ սեղմ ու ժլատ տեղեկություններ է հաղորդում հերիաթների ասացողների ու գրառման հանգամանքների մասին:



Առևլն հատորի հեթիաթների ժանոթագրությունների մեջ տրվում են հետեւալ կարգի տեղեկություններ:

1. Ներկա հրատարակության համար հիմք ծառայած աղբյուրի մասին:
2. Դրառման հանգամանքների և ասացողների մասին բանահավաքների հազարդած բուռոր վկայությունները:

3. Դրառման ձեռագիրը պահպանվելու դեպքում՝ հրատարակող տեքստի և դրառման ձեռադրի միջև նորած տարբերությունների մասին, եթե դրանք բանափական հետաքրքրության են ներկայացնում:

4. Տվյալ հեթիաթի վերահրատարակությունների կամ թարգմանությունների յասին:

5. Տվյալ հեթիաթի սյուժետի առնությունը նախորդ հատորի հեթիաթների սյուժետների հետ:

6. Տվյալ հեթիաթի դրական մշակման մասին, եթե կա ստույգ վկայություն այդ նյութը մշակող հեղինակի կողմից:

Մանոթագրությունների մեջ համառոտության համար Տ. Նավասարդյանցի ուշայ ժողովրդական հեթիաթները անվանում ենք՝ Տ. Նավասարդյանցի «Հեթիաթներ...», Եր. Լալայանի «Մարգարիտներ հայ բանահայության ժողովածուն» Եր. Լալայանի «Մարգարիտներ...», Հայկական ՍՍԾ Գիտությունների ակադեմիայի Դրականության ինստիտուտի բանահայութական արխիվը՝ ՀՍՍԾ ԳԱ-Գրականության ինստիտուտի բանահայութական արխիվը՝ ՀՍՍԾ ԳԱ-Գրականության արխիվ:

1. ԱՆՄԱՀԱԿԱՆ ԽԵԶՈՐ

(էջ 23)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի ուշեթիաթների...» Ո գրքում (էջ 3—25) հրատարակված տեքստի: Տողատակի ժանոթագրության մեջ բանահավաք-հրատարակիլ հայտնում է, որ այդ գրքում զետեղված հեթիաթները ժողովել է ինքը Վազգորշապատ զյուղում և սգրել բռն տեղական բարրառով։ Ուրիշ տեղեկություն հեթիաթի դրառման հանգամանքների մասին չի հայտնում։ Ասացողը անհայտ է։ Հեթիաթի դրառման ստույգ թվականը ևս չի տրված։ Բայց ելնելով այն փաստից, որ ՀՍՍԾ ԳԱ Դրականության ինստիտուտի բանահայութական արխիվի Տ. Նավասարդյանցի ֆոնդում (տե՛ս գործ I, № 2), նորած ձեռադրի նյութերի հավաքում հայտնական հեթիաթների մեջ գրքում պատճենահանում է 1876 թ., իսկ ուշայ ժողովրդական հեթիաթների։ Ո գիրքը լույս է տեսել 1882 թ., պետք է եղակացնել, որ այս հեթիաթը գրի առնված կարող է լինել 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում։

«Ինժեներական խնձոր» հեթիաթը իր թեմատիկ նպատակադրժամք առնված է ուշայ ժողովրդական հեթիաթներից գիտական հրատարակության նախորդ՝ I հատորում տեղ գտած ուշազարան ըլբուզ կամ Ալո-Դիենոյի նազը (№ 1) և «Պուշ-Գարին» (№ 2) հեթիաթներին, որպես ընդհանրություն պահպանելով երեք եղայր-

ների արկածները և փոքր եղբոր նկատմամբ ցուցաբերած խարդախությունը, սահային տարրերվելով՝ զեպքերի ընդունելու ու սյուժետային գծի զարգացման տեսակնետից:

«Անմահական խնձոր» հերիամեն ունեցել է հետեւալ վերահրատարակությունները:

«Հայ մողովրդական ներարկներ», կազմեց և խմբագրեց Ա. Ղանալանյան, Սրբան, 1950, էջ 5—20: Ժողովածուի մեջ մեզ հետաքրքրող հերիամենները արտատպաված են Տ. Նավասարդյանցի «Հերիամենների...» գրքերից և Եր. Լալայանի «Մարդարիտների...» II դրախտից: Հաջորդ ժամովագրությունների մեջ համառոտության համար օժանդակ այս աղյուրը կոչված է՝ «Հայ մողովրդական ներարկներ», 1950:

«Հայ մողովրդական ներարկներ», ժողովածուն կազմել է Հերիամենները լեզվական մասնակի մշակման է ենթարկել Ա. Նազարյանը. ձեռավորումը՝ ժողովրդական նկարիչ Հ. Կոչոյանի, Սրբան, 1956, էջ 5—16: Ժողովածուի մեջ մեզ հետաքրքրող հերիամենները վերցված են Տ. Նավասարդյանցի «Հերիամենների...» գրքերից: Հաջորդ ժամովագրությունների մեջ օժանդակ այս աղյուրը համառոտության համար կոչված է՝ «Հայ մողովրդական ներարկներ», 1956:

«Հատընտիք նայ ժողովրդական բանահյուսուրյան», կազմեց Գր. Գրիգորյան, Սրբան, 1956, էջ 174—190: Մեզ հետաքրքրող հերիամենները արտատպված են Ա. Ղանալանյանի կազմած ու խմբագրած «Հայ ժողովրդական հերիամենների» ժողովածուից: Հաջորդ ժամովագրությունների մեջ այս աղյուրը համառոտության համար կոչված է՝ «Հատընտիք նայ ժողովրդական բանահյուսուրյան», 1956:

«Basime popularare Armenie», Cartea Rusă, 1956, էջ 7—28: Սույն ժողովածուն պարունակում է «Հայ ժողովրդական հերիամենների ոռուիներն թարգմանությունը, որ կատարել են Շտեֆանա Վելիխոսուր Թեոդորյանուն և Սիրակ Կոսկանյանը՝ պատրոճելով Ա. Ղանալանյանի կազմած ու խմբագրած «Հայ ժողովրդական հերիամեններ» ժողովածուն, Սրբան, 1950: Թարգմանված են ժողովածուի ոչ բոլոր հերիամենները: Թարգմանությունը լույս է տեսել Բուխարեստում, սմուսական դիրք (Cartea Rusă) հրատարակությամբ: Հաջորդ ժամովագրությունների մեջ այս աղյուրը կոչված է՝ «Basime popularare Armenia», 1958:

«Հայ ժողովրդական հերիամենների I գրում Տ. Նավասարդյանը հերիամենների տեքստերից առաջ զետեղել է շափածո մի հատված, որը հայտնի է որպես մանկական երգիծական երգ, տողատակին նշելով. Երբեմն հերիամեններն այսպիսի նախարանով են սկսվում: Բերում ենք այդ հատվածը, որովհետ դա վերաբերում է ժողովածուի բոլոր գրքերին:

«Հե՞քաթ, հե՞քաթ պապըս ա,
Դաշխա քուուկ տակիս ա,
Նի՞նեմ էթամ էրևան,
Էրևանա կուտ բերեմ:
Կուտը տանեմ տամ հավերին,
Հավերն ինձ ձու-ձու տան.
Զու-ձու տանեմ խառադին տամ,
Խառադին ինձ մի շրմու տա.

Երվուն տանեմ չորանին տամ,
 Չորանն ինձ մի զառ տա.
 Դաոր տանեմ ասուն տամ,
 Ասոոժ ինձ մի աղպեր տա:
 «Ա' պակը, ա' զարի, շա'ն աղպեր,
 Ես սարի տակին աղպեր.
 Դու բերգի տակին աղպեր.
 Զալ-չալ կովերն ի՞նչ էլանք:
 — Նախրատափին դում էլան,
 Ժումե-ժում կաթ կտան»:

2. ՈՍԿԵ ԶՈՒԿԸ

(էջ 39)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հերիաթների...» I գրքում (էջ 22—27) հրատարակված տեքստի Տ. Նավասարդյանցը գրքի սկզբում, տողատակին դրել է մի համառոտ ծանոթություն, և յայ հերիաթները ժողովել եմ Երևանյան նահանգում՝ Վաղարշապատ զյուղում և զրել բուն տեղական բարրառով։ Ասացողն անհայտ է։ Հայունի չէ նաև դրաման ստուգ թվականը, բայց պետք է ենթադրել, որ այն դրի է առևկել 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում։

«Ոսկե ձուկը հերիաթը թեմայով առնչվում է Հայ ժողովրդական հերիաթներին զիտական հրատարակության I հատորի «Հաղարան ըլրուկ կամ Ալո-Դինոյի նազլը» (№ 1) և «Ղուշ-Փարին» (№ 2) հերիաթների այտմաներին, սակայն այստեղ սյունեւոր միտարրը չէ և զուգակցվում են մի քանի առ էպիգոդներ։

Այս հերիաթը նախքան Տ. Նավասարդյանցի «Հերիաթների...» I գրքում տպագրվելը, հատվածարար առաջին անգամ հրատարակվել է «Արարատ» ամսագրի 1881 թ. № 1 և № 2 թերթներում։

«Ոսկե ձուկը հերիաթի ունեցել է հետեւյալ վերահրատարակությունները։

Հայ ժողովրդական ներիաթներ», 1950, էջ 307—317։

«Basme populaire Armene», 1958, էջ 329—338։

3. ԶԱՆ-ՓՈԼԱՏ

(էջ 50)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հերիաթների...» III գրքում (էջ 2—42) հրատարակված տեքստի Հերիաթի վերնազրի տակ, փակագծում նշված է՝ Հայ ժողովրդական հերիաթ։ Դրի մեջ այլ ծանոթություն չկա, որից հնարավոր էին տեղեկություն քաղել դրաման Հանգամաների մասին։ Բայց Հավանական է, որ այս հերիաթը նույնպես գրի է առել Տ. Նավասարդյանցը, Վաղարշապատում, 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

Այս հերիաթը թեմայով ու սյուժետային գծերով ընդհանրություններ ունի ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Անա թաքավորի հերիաթը» (№ 3), «Արգար թաքավոր» (№ 4), «Հուրի թաքավորի ախշկա հերիաթը» (№ 7), «Օհան ողնջապարի տղի հերիաթը» (№ 8) և մի շաբաթ այլ հերիաթների հետ:

«Պահ-Փոլատ» հերիաթն ունեցել է հետեւալ վերահրատարակությունները:
«Հայ ծողովրդական ներկարներ», 1950, էջ 55—84:

«Basme populaire Arménie», 1958, էջ 67—95.

4. ԳԱՐԱՍՈՒԻՆ ՀԱՐԱՄԻ

(էջ 82)

Տպագրվում է բատ Տ. Նավասարդյանցի «Հերիաթների...» IX գրքում (էջ 30—48) հրատարակված տեքստի: Դրի տողատակին Տ. Նավասարդյանցը թողել է հետեւալ համառու ծանոթությունը: «Չութիս», «Ուրշի» հմար ֆոր փորողը ինքը կընկնի մերը¹, «Աղդիակ», «Սուս հերիաթ» և «Թառասուն հարամի» հերիաթները մեզ պատմել է Հարդեկի օրիորդ Աշխեն Հովհաննիսյանցը, որը բնիկ վաղարշապատցի է: Աշխեն Հովհաննիսյանցը նշանավոր բանաստեղծ է. Հովհաննիսյանի քույրն է, որի հետ հետագալում ամուսնացել է ինքը՝ բանահավաք Տ. Նավասարդյանցը:

Հերիաթը դրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ դյուղում, Հավանարար 1876—1902 թթ. ընկած ժամանակամիջոցում: Հերիաթի վերնագրի տակ, փակագծի մեջ նշված է՝ արարատյան բարբառով:

Այս հերիաթը թեմայով ու սյուժետային զարգացմամբ ընդհանուր շատ գծեր ունի ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Հուրի թաքավորի ախշկա հերիաթի» (№ 7) և «Օհան ողնջապարի հերիաթի» (№ 8) ևորիշ այլ հերիաթների հետ:

5. ՄԱՐՏԻՐՈՍԻ ՀԵԹԻԱԹԸ

(էջ 95)

Տպագրված է բատ Նր. Լալայանի «Մարդարիտների...» II գրքում (էջ 92—101) հրատարակված տեքստի: Տողատակի համառու ծանոթության մեջ բանահավաքը հայտնում է. «Այս հերիաթը պատմել է վաղարշապատցի Մանուկ Խաչարյանը 1918 թ. հուլիսի 19-ին, Վաղարշապատ դյուղում»:

Սյուժետային որոշ գծերով այս հերիաթը առնվազում է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Ռևակի քաքուկով տղի հերիաթի» (№ 18):

¹ Այս հերիաթը տպագրված է Տ. Նավասարդյանցի «Հերիաթների...» X գըր-քում (Ս. 4.):

6. ԽՈՉԱՐԱԾ

(էշ 107)

Տպագրվում է ըստ Եր. Հալայանի «Մարզարիտների...» II գրքում (էշ 67—78) Հրատարակված տեքստի: Տողատակին դրված է բանահավաքի հետևյալ ժանութությունը. «Այս հերիամբ պատճեն է վաղարշապատցի Մանուկ Խաչատրյան 55-ամյա անդրադեմ ժամկուլը, 1913 թ. Հուլիսի 21-ին, Վաղարշապատ գյուղում» (տես № 5 հերիամբի ծանոթագրությունը): Հերիամբի վերնադրի տակ փակագծում նշված է՝ Վաղարշապատ:

Այս հերիամբ որոշ շափով նմանվում է ներկա Հրատարակության նախորդ՝ Համարի «Դավիթի հերիամբնեա (№ 21):

«Խողարած հերիամին ունեցել է հատկալ վերահրատարակությունները:

«Հայ ծողովրդական ներկարներ», 1950, էշ 283—296:

«Basme populaire Armene», 1958, էշ 303—318:

7. ԿՈՄԲԱԼ ՏՈՒ...

(էշ 121)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ Դրականության ինստիտուտի բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդ-անցի ֆոնդ, գործ 2, № 21): Զեռադրից պարզվում է, որ այս հերիամբը գրի է առել, կամ այլ գրառումից արտադրել է Տ. Նավասարդյանցը: Գրառման հանգամանքների մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում: Միայն հերիամի վերնադրի տակ, փակագծի մեջ նշված է՝ արարատյան բարբառված Ասացողի մասին նույնական հիշատակություն չկա: Հերիամի առաջին էջում Տ. Նավասարդյանցը թողել է այսպիսի մակագրություն: «Արտագրված է տպելու համար, 11-րդ գրքում, 29 փետրվարի 1908 թ.»: Այդ 11-րդ գիրքը, ինչպես հայտնի է, մնացել է անտիպ: Սույն հերիամի արտագրված մաքուր օրինակը չի պահպանվել: Իներկա հրատարակության համար հիմք է ծառայել սևագիր օրինակը, որտեղ կան Տ. Նավասարդյանցի ձեռքով կատրված բաղմաթիվ ուղղումներ: Հերիամբը հավակաբար գրի է առնելիս 1876—1908 թթ. ընկած ժամանակամիջոցում:

8. ՂԱՄԲԱՐ

(էշ 134)

Տպագրվում է առաջին անգամ: Գրառման ձեռագիրը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ Դրականության ինստիտուտի բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդ-անցի ֆոնդ, գործ 2, № 20): Զեռագիր օրինակում որևէ հիշատակություն չկա: Հերիամի գրառման հանգամանքների մասին: Միայն վերնադրի տակ, փակագծի մեջ

նշված է՝ արարատյան բարբառով: Հեքիաթը զրված է Տ. Նավասարդյանցի ձեռագործ, բայց դժվար է առել իրեն՝ Տ. Նավասարդյանցի գրառումն է, թե այլ բանհավաքի գրառման մշակված արտագրությունը: Ասացողն անհայտ է: Հավանաբար Հեքիաթը զրի է առնվն 1876—1908 թթ. ընկած ժամանակամիջոցում, Վաղարշապատում: «Ղամբար» հեքիաթը մտցված է եղել Տ. Նավասարդյանցի պատրաստած և այլ ժողովրդական հեքիաթների: Հեքիաթական 11-րդ զրքի մեջ, որը մնացել է անտիպ:

9. ՂԱՀՐԱՄԱՆ-ԲՈՒԹ

(էջ 145)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» VII գրքում (էջ 3—23) Հրատարակված տեքստի: Գրքում Նավասարդյանցը ծանոթություն չի թողել հեքիաթի գրառման հանգամանքների մասին: Այս հեքիաթը զրի է առնել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, համանաբար 1876—1891 թթ. ընկած ժամանակամիջոցում:

«Ղահրաման-բլութ» հեքիաթը թիմայով և սյուժետային դեկրով ներկա Հրատարակության I հատորի «Անա թաքավորի հեքիաթի» (№ 1) տարրերակն է, գեղարվեստական-արտահայտչական որոշ նրբերանգների զանազանությամբ:

10. ԶՈՓՋԻ

(էջ 161)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» IV գրքում (էջ 37—53) Հրատարակված տեքստի: Գրքում ծանոթություն չի տրված, որտեղից կարելի լիներ իմանալ հեքիաթի գրառման հանգամանքները: Բայց հավանական է, որ այս հեքիաթը ևս զրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, համանաբար 1876—1888 թթ. ընկած ժամանակամիջոցում: Ասացողն անհայտ է:

Այս հեքիաթի տարրերակն է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորում տպագրված նույնանուն հեքիաթը (հավելված, № 2):

11. ԹԱՐԽՈՒՆ ԹԱԳԱԼՈՒԹԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 175)

Տպագրվում է ըստ Եր. Հալայանի «Մարգարիտների...» II գրքում (էջ 54—66) Հրատարակված տեքստի: Հեքիաթի վերնայի տակ փակագծում նշված է՝ Վաղարշապատ, իսկ տողատակին բանահավաքը թողել է հետեւյալ համառոտ ժանոթությունը: «Պատմեց 1913 թ. Հուլիսի 20-ին: Վաղարշապատ գյուղում, նույն գյուղացի Մանուկ Խաչատրյան անգրագետ, 55-ամյա ծերունի ժամկուրք (տես սույն հատորի № 5, 6 հեքիաթների ժանոթագրությունները):

«Թարխուն թագավորի հեքիաթը» սյուժետային զարգացմամբ ու գեղքերի և էպիզոդների ընդգրկմամբ նման է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Հուրի թագավորի ախշկա հեքիաթին» (№ 7):

12. ՄՈՒԱԼԻ ՀԵՔԻԱԽՐ

(էջ 189)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» I գրքում (էջ 47—61) Հրատարակված տեքստի: Տողատակի ժանոթության համաձայն այս հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, Հավանաբար 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում:

«Մոթալի հեքիաթը թևմայով ու Թյուժետային գծով առնչվում է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Զուկ տղան» հեքիաթին (№ 31), իսկ առանձին էպիզոդներով ու գեղքերով մասնակիորնն նման է նաև նույն հատորի «Մուրզի հեքիաթին» (№ 24):

«Մոթալի հեքիաթը նախքան «Հայ» ժողովրդական հեքիաթներին I գրքում ապագրվելը Տ. Նավասարդյանցը հատվածաբար տպագրել է «Արարատ» ամսագրի 1882 թ. № 3—4-ի թերթուններում:

13. ՕԽԱՅ-ԲԱՐԻ

(էջ 199)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» IV գրքում (էջ 3—33) Հրատարակված տեքստի: Գրքում լկա ծանոթություն, որտեղից հնարավոր լիներ պարզել հեքիաթի գրառման հանգամանքները, թայց կասկածից զուրս է, որ այս հեքիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը, Վաղարշապատ գյուղում, Հավանաբար 1876—1888 թթ. ընկած ժամանակամիջոցում: Ասացողն անհայտ է:

14. ԽՈՒԴԱՎԵՐՈՒԻ

(էջ 222)

Տպագրվում է առաջին անգամ: Դրառման ձեռագիրը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ Դրականության ինստիտուտի բանաճյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գրք 2, № 21): Ձեռագրում տեղնկություններ լկան հեքիաթի գրառման հանգամանքների մասին: Վերեազրի տակ, փակագծում նշված է՝ արարատյան բարբառով: Գրառումը՝ Տ. Նավասարդյանցի ձեռագրով չէ. Հայտնի չէ նաև, թե ով է ասացողը: Հավանաբար այս հեքիաթը գրի է առնվել 1876—1908 թթ. ընկած ժամանակամիջոցում: Այս հեքիաթը ևս մտցված է եղել Տ. Նավասարդյանցի «Հայ» ժողովրդական հեքիաթների 11-րդ գրքի մեջ, որը մնացել է անտիպ: Այս հեքիաթի գրառման տեքստի վրա կան նույն ձեռագրով կատարված բազմաթիվ շնչումներ և ուղղումներ, որոնք բանասիրական արժեք լին ներկայացնում, այդ պատճառով էլ չենք անդրադարձել դրանց:

(Էջ 234)

Տպագրվում է առաջին անգամ: Դրաման ձեռադիրը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ Դրականության ինստիտուտի բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 3, № 21): Ձեռագրում տեղեկություն չի արվում Հերիաթի գրառյան հանգամանքների վերաբերյալ, միայն վերնազրի տակ, փակադում նշված է՝ արարատյան բարբառով: Ձեռագրից պետք է ենթադրել, որ այս հերիաթը գրի է առել Վաղարշապատցի Փասպար Աղապայցյանը, հավանաբար 1876—1908 թթ. ընկած ժամանակամիջոցում: Ասացողն անհայտ է: Դրաման ձեռադիրը վրա կա Տ. Նավասարդյանցի ձեռքով կատարված բաղմաթիվ ուղղումներ: Այս հերիաթը ևս մտցված է Եղել Տ. Նավասարդյանցը «Հայ ժողովրդական հերիաթներից Հերիաթական 11-րդ գրքում, որը մնացել է անտիպ:

16. ՄԵՌԵԼԻ ՀՐԵՇՏԱԿԸ

(Էջ 243)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հերիաթների...» IV գրքում (էջ 88—81) հրատարակված տեքստի: Դրամ ժանոնթություն չկա Հերիաթի գրառյան հանգամանքների վերաբերյալ Կամկածից գուրս է, որ այս հերիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատում, հավանաբար 1876—1888 թթ. ընկած ժամանակամիջոցում:

Այս հերիաթի թեման առնվազում է երախտիքի փոխհատուցման շուրջը հյուսված Հերիաթներին, բայց այստեղ որոշակիորեն արտացոլված է նաև ողիների մասին ունեցած ժողովրդի պատկերացումները ու նախապաշտարմունքները:

17. ԱՂԱԽՍԲ, ԳԵԼԸ, ԱՐՁԸ ՈՒ ԶՄՈՒՌ-ՂՈՒՇԸ

(Էջ 254)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հերիաթների...» II գրքում (էջ 29—37) հրատարակված տեքստի: Դրիք տողատակին դրված ժանոնթության համաձայն, այս հերիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատում, հավանաբար 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում: Ասացողն անհայտ է:

Այս հերիաթը իր բնույթով տարրերվում է ինչպես կախարդական, այնպես էլ կենցաղային հերիաթներից: Սույն հերիաթի գործողությունների մեջ կենտրոնական տեղ էն գրավում կենցանական աշխարհի ներկայացուցիչները, որոնք նման չեն մյուս հերիաթների կերպարանափոխած կենցանիներին:

Այս հերիաթը ունեցել է հետեւալ վերահրատարակությունը:
«Հայ ժողովրդական ներկայաներ», 1956, էջ 45—49,

18. ԳԱԼՈՒՆԵՐ-ԱՂՋԵՐ

(էջ 260)

Տպագրվում է ըստ S. Նավասարդյանցի «Հերիաթների...» I գրքում (էջ 14—21) Հրատարակված տեքստի: Տողատակի ժանոթությունից պարզվում է, որ այս հերիաթը գրի է առել ինքը՝ S. Նավասարդյանցը, երևանյան նահանգի Վաղարշապատ գյուղում և զրել «բռն տեղական բարբառվա»: Ասացողն անհայտ է: Հավանաբար հերիաթը գրի է առնված 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում:

Այս հերիաթը իր թեմայով առնվագում է խորթ մոր կողմից հալածված զավակների մասին հյուսված հերիաթներին (տե՛ս ներկա հրատարակության՝ նախորդ՝ I հատորի № 16, 17 հերիաթները):

«Գառնիկ-աղպեր» հերիաթը օգտագործել և գեղարվեստական չափածո մշակյան է ենթարկել Հ. Թումանյանը 1905 թ., թողնելով հետեւալ վկայությունը. «Բռնվանդակությունը բաղված է S. Նավասարդյանցի «Հայ ժողովուրդական հերիաթներ» ժողովածուից» (տե՛ս Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, Հատ. Ա, Երևան, 1958 թ.):

«Դառնիկ-աղպեր» հերիաթը նախաբան «Հայ ժողովրդական հերիաթների» I գրքում տպադրելը S. Նավասարդյանցը հրապարակել է «Արարատ» ամսագրի 1882 թ. № 1-ի թերթունում:

«Գառնիկ-աղպեր» հերիաթն ունեցել է հետեւալ վերահրատարակությունները: «Հայ ժողովրդական ներքարներ», 1950, էջ 109—114:

«Basme populaire Armene», 1958, էջ 126—131:

19. ՀԱՐՍՆԵՐՆ ՈՒ ՏԱԼՔ

(էջ 266)

Տպագրվում է ըստ եր. Լալայանի «Մարգարիտների...» II գրքում (էջ 165—174) Հրատարակված տեքստի: Հերիաթի վերնագրի տակ, փակագիր մեջ նշված է՝ «Վաղարշապատ: Տողատակի ժանոթության մեջ բանահավաքը հիշում է, որ այս հերիաթը պատմել է վաղարշապատցի Վաղարշակ Վարդանյանը 1913 թ. օգոստոսի 22-ին, Վաղարշապատում»:

Այս հերիաթը թեմայով ու սյուժետային զարգացմամբ առնչվում է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի ԱԱսլան Բագավորը հերիաթին (№ 15):

«Հարսներն ու տալք» հերիաթն ունեցել է հետեւալ վերահրատարակությունը.

«Հայ ժողովրդական ներքարներ», 1950, էջ 183—192:

20. ԷՐԿՈՒ ԱՂՋԵՐ

(էջ 277)

Տպագրվում է ըստ եր. Լալայանի «Մարգարիտների...» II գրքում (էջ 117—122) հրատարակված տեքստի: Հերիաթի վերնագրի տակ, փակագիր մեջ վագած է՝ «Վաղարշապատ: Տողատակի ժանոթության մեջ բանահավաքը հայտնում է,

որ այս Հեքիաթը պատմել է Վաղարշապատցի Մանուկ Խաչառյանը 1913 թ. օգոստոսի 14-ին, Վաղարշապատում (տե՛ս սույն հատորի № 5, 6, 11 Հեքիաթների ծանոթագրությունները):

21. ԱՆՁԻԳՅԱՐ ՄԵՐ

(Էջ 284)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» I գրքում (էջ 41—43) հրատարակված տեքստի: Գրքի տողատակի ժանոթությունից պարզվում է, որ Հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1882 թթ. ընկած ժամանակաշրջանում: Ասացողն անհայտ է:

ՀԱՍԴ ԳԱ Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվի Տ. Նավասարդյանցի ֆոնդում կա ձեռագիր մի ստվարածավալ տեսոր (տե՛ս գործ 1, № 2). որի խորագիրը է «Հայ ծողովդական Հեքիաթներ», 1876—1882 թթ.: Այդ ձեռագիրը նյութերի մեջ այս Հեքիաթը կտրված-հանված է, մնացել է միայն գրառման վերջին մի քանի տողու Պահպանված գրառման այդ մի քանի տողի և տպագրվածի համեմատությունից պարզվում է, որ Նավասարդյանցը շտկումներ է կատարել, ուղղված ու փոխելով պատմելու գործողության քերականական ժամանակը, առանձին արտաշայտություններ ու ոճեր, նպատակ ունենալով մոռեցնել մողովրդական պատումներին:

Այս Հեքիաթը նախքան առանձին գրքում տպագրվելը, Տ. Նավասարդյանցը հրատարակել է «Արարատ» ամսագրի 1882 թ. № 3-ի թիրթոնում:

22. ՀԱԼԱԼԸ ԶՀԱՐԱՄՈՂ ԿԱՒԿԸ

(Էջ 286)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» IX գրքում (էջ 53—54) հրատարակված տեքստի: Հեքիաթի գրառման հանգամանքների մասին գրքում ժանոթություն շկա: Այս Հեքիաթը և գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1902 թթ. ընկած ժամանակամիջոցում: Ասացողն անհայտ է:

Հեքիաթի վերնագրի տակ փակագծի մեջ նշված է՝ արարատյան բարբառով:

Այս Հեքիաթը թեմայով ու սյուժետով առնչվում է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Սուրբայի Սովորաբարի որթու Հեքիաթին» (№ 13) և «Սուրբայի Հեքիաթին» (№ 14):

23. ԱՍՍՈՒ ՊԱՀԱՆ ԳԱՌՈՒ ԳԵԼԸ ԶԻ ՈՒՏԻ

(Էջ 295)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» V գրքում (էջ 3—20) հրատարակված տեքստի: Գրքում ժանոթություն շկա Հեքիաթի գրառման հանգամանքների մասին: Հեքիաթի վերնագրի տակ փակագծերի մեջ նշված է՝ արարատ-

յան բարբառով։ Այս հերիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ պյուղում, հավանաբար 1876—1889 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

Այս հերիաթը թեմայով ու այլուծետով զուգաղիպում է Ներկա հրատարակության նախորդ՝¹ Ի հատորի ՇՍուրայի սովորագության որին հերիաթինք (№ 13) և ՇՄուկսու հերիաթինք (№ 14):

24. ՄԱՐԴԻ ՃԱԿԱԾԻ ԳՐԱԾՈՒ ԶԵ ԶՆԶՎԻ

(էջ 310)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հերիաթների...» II գրքում (էջ 38—44) հրատարակված տեքստի Դրբի տողատակի ժամոթության համաձայն այս հերիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում։

